ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«22» մայիսի 2019 թվականի N222-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի N90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 11.1-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 15-ի

N076/69-2019 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Մանթաշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի մայիսի 3-ի նիստի թիվ 4 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2019 թվականի մայիսի 3-ի նիստի թիվ 5 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Մանթաշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արմեն Ստամբոլցյանի և Նաիրա մարտիրոսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Ստյոպա Չոբանյանի, մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Նաիրա Մանուկյանի և ժորա Բարսեղյանի, ծնողական խորհրդի կողմից առաջադրված Հերմինե Հակոբյանի և Վարդուհի Կարապետյանի լիազորությունները:

2.Խորհրդի կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Զոհրաբ Հովսեփյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արտուշ Հովհաննիսյանին և Տաթևիկ Առաքելյանին, մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Վարդանուշ Մկրտչյանին և Կարինե Չոբանյանին, ծնողական խորհրդի կողմից առաջադրված Նելլի Հովսեփյանին և Լուսինե Հովհաննիսյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Մանթաշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N90-Ա որոշման հավելվածում «Ստամբոլցյան Արմեն», «Մարտիրոսյան Նաիրա», «Զոբանյան Ստյոպա», «Մանուկյան Նաիրա», «Բասենցյան Ժորա», «Հակոբյան Հերմինե», «Կարապետյան Վարդուհի» բառերը համապատասխանաբար փոխարինել «Հովհաննիսյան Արտուշ», «Առաքելյան Տաթևիկ», «Հոսեփյան Զոհրաբ», «Մկրտչյան Վարդանուշ», «Կարինե Զոբանյան», «Հովսեփյան Նելլի», «Հովհաննիսյան Լուսինե» բառերով:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է